ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

----- մայիսի 2011թ. **N ...Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԻԼ ԴԸ ՖՐԱՆՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Հաստատել 2011թ. ապրիլի 26-ին Երևան քաղաքի և Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի միջև համագործակցության համաձայնագիրը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԻԼ ԴԸ ՖՐԱՆՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ելնելով Հայաստանի հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության քաղաքների միջև երկկողմ համագործակցության անհրաժեշտությունից և հիմք ընդունելով 2011թ. ապրիլի 26-ին Փարիզ քաղաքում Երևան քաղաքի և Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի միջև համագործակցության ստորագրված համաձայնագիրը, նպատակ ունենալով ակտիվացնել երկկողմ կապերը՝ անհրաժեշտ եմ համարում վերոնշյալ համաձայնագրի հաստատումը Երևան քաղաքի ավագանու կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԻԼ ԴԸ ՖՐԱՆՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի և Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի միջև համագործակցության համաձայնագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Իլ դը Ֆրանսի Շրջանային խորհրդի և Երևան քաղաքի միջև համագործակցության համաձայնագիր

Իլ դը Ֆրանսի Շրջանային խորհուրդը՝ ներկայացված իր նախագահ պարոն Ժան-Պոլ Հյուշոնի կողմից,
Երևան քաղաքը՝ ներկայացված իր քաղաքապետ պարոն Կարեն Կարապետյանի կողմից,
Հաշվի առնելով բարեկամական պատմական կապերը և առանձնահատուկ համագործակցության հարաբերությունները, որոնք միավորում են Ֆրանսիան և Հայաստանը,
Հաշվի առնելով ընդհանուր կամքը՝ Իլ դը Ֆրանս շրջանի և Երևան քաղաքի միջև խրախուսելու համար համագործակցության քաղաքականություն՝ հիմնված բարեկամական կապերի և համերաշխության վրա,
Հաշվի առնելով երկու կողմերի կամքը՝ իրականացնելու համատեղ գործողություններ՝ ուղղված տարածքների և բնակչության մերձեցմանը, փոխանակումների խրախուսմանը, մասնավորապես՝ ենթակառուցվածքային աջակցության, կայուն զարգացման, համալսարանական և մշակութային փոխանակումների, ֆրանկոֆոնիային աջակցելու, զբոսաշրջության, վերապատրաստման հարցերում,
Ողջունելով հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության ակտիվությունը և 2010թ-ի հոկտեմբերին Երևանում կայացած Ապակենտրոնացված համագործակցության հայ-ֆրանսիական խորհրդաժողովի և, հատկապես, այստեղ հաստատված Խարտիայի հաջողությունը:
Որոշում են կնքել սույն համագործակցության համաձայնագիրը՝ հարգելով իրենց իրավասությանը վերաբերող բնագավառները, և այս նպատակով ընդունում են սույն համաձայնագրի դրույթները՝ արտահայտված ներքոհիշյալ հոդվածների շրջանակներում:

Հոդված I
Ընդհանուր դրույթներ

Համաձայնագրի նպատակն է իրականացնել համատեղ գործունեություն՝ զարգացնելու և ամրապնդելու համար երկու կողմերի միջև հարաբերությունները՝ խորացնելով երկու երկրների միջև եղած կապերը՝ ի նպաստ երկու տարածքների բնակչությունների:

Գործընկերության շրջանակներում երկու կողմերը որոշում են խրախուսել համագործակցության իրենց հարաբերությունների զարգացումը իրենց իրավասություններից կախված գործունեության բնագավառներում:

Այս զարգացումը կիրականացվի փորձագետների, տեղեկատվության և փորձի փոխանակման, ինչպես նաև միասնական ծրագրերի և փոխադարձ խորհրդակցության իրականացման միջոցով:

<u>Հոդված II- Թեմատիկ բովանդակություն</u>

Համաձայնագրի շրջանակներում կողմերը միասին որոշում են խրախուսել փոխադարձաբար օգտակար գործողությունները՝ առավելությունը տալով հետևյալ բնագավառներին՝

- **Ենթակառուցվածքային աջակցություն**

Առավելությունը կտրվի տարածքային կառավարման բնագավառներում փորձի փոխանակմանը և վերապատրաստման ծրագրերին՝ նախատեսված ընտրվածների և վարչական կադրերի համար:

- **Կայուն զարգացում**

Փորձի և փորձագետների փոխանակումը կարող է իրականացվել էկոլոգիական բնույթի գործունեության, հատկապես՝ թափոնների հավաքման և վերամշակման, ինչպես նաև էներգիայի սպառման և տնօրինման ոլորտներում:

- **Մշակույթ և ֆրանկոֆոնիա**

Կխրախուսվեն փոխանակումները և համատեղ միջոցառումները մշակութային բնագավառում, մասնավորապես՝ մուլտֆիլմերի, գրքի և գրականության բնագավառներում: Ինչպես նաև, ամեն տարի Հայաստանում կազմակերպվող ֆրանկոֆոնիայի օրերը կարող են լավ շրջանակ լինել այս մշակութային փոխանակումների իրականացման համար:
Շեշտը կդրվի ֆրանկոֆոնիայի խրախուսման վրա, մասնավորապես՝ Երևանում ֆրանսերենի ուսուցմանը ցուցաբերվող աջակցության և իրազեկման նախաձեռնությունների ու վերապատրաստման ծրագրերի աջակցության միջոցով՝ հատկապես հիմնվելով Հայաստանում ֆրանսիական համալսարանի վրա:

- **Զբոսաշրջություն և ժառանգություն**

Փորձի և փորձագետների փոխանակումները կիրականացվեն հյուրընկալության ինդուստրայի, զբոսաշրջության, սպասարկման ոլորտի զարգացման, մշակութային ժառանգության պահպանման ու արժեվորման ուղղությամբ՝ համապատասխան ճյուղի կադրերի վերապատրաստման, ինչպես նաև վերոնշյալ ոլորտի մոդելների ուսումնասիրության միջոցով:

- **Տարածքի բարեկարգում և հասարակական տրանսպորտի կազմակերպում**

Համագործակցությունը կարող է իրականանալ մասնավորապես հասարակական տրանսպորտային ցանցի արդիականացման և կարգավորման վերաբերյալ փորձի և գիտելիքների փոխանակման միջոցով:

- **Տնտեսական զարգացում**

Փորձի և փորձագետների փոխանակումներ կարող են իրականացվել ներդրումների միջավայրի, դրա խրախուսման և սահմանման ուղղությամբ:

- **Կրթություն և երիտասարդների շարժունակություն**

Կարող են խրախուսվել և օժանդակվել կրթական և վերապատրաստման հաստատությունների միջև համագործակցությունը, համալսարանական փոխանակումները և երիտասարդների շարժունակությունը, այդ թվում մասնագիտական կրթության նպատակով:

Կողմերը չեն բացառում ապագայում գործողությունների իրականացումը գործունեության այլ բնագավառներում, որոնց համար իրենք փոխադարձաբար իրավասություն են ձեռք բերել կամ որոնց վրա կողմերն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում՝ մասնագիտական վերապատրաստում, սպորտի բնագավառում ակտիվության խրախուսում, գործունեություն երիտասարդության, առողջապահության ոլորտներում:

<u>Հոդված III- Իրականացման եղանակները</u>

Կողմերը որոշում են ստեղծել համագործակցության մշտական Խառը հանձնաժողով՝ կոչված աշխատանքի բազմամյա ծրագրերի մշակմանը, ինչպես նաև համագործակցության վերհսկմանը և գնահատմանը:

Այս միասնական մարմնի համանախագահները կլինեն Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի նախագահը (կամ իր ներկայացուցիչը) և Երևանի քաղաքապետը (կամ իր ներկայացուցիչը): Այն կազմված կլինի սույն Համաձայնագիրը ստորագրած կողմերից յուրաքանչյուրի ներկայացուցիչներից և կհավաքվի նվազագույնը երեք տարին մեկ անգամ, հաջորդաբար Փարիզում և Երևանում:

Այդ մարմինը կառաջարկի միջոցներն ուղղել աշխատանքի բազմամյա ծրագրի մեջ ընդգրկված նախագծերի ֆինանսավորմանը՝ վստահեցնելով, որ ստեղծված կլինեն նախաձեռնված գործողությունների իրականացման համար անհրաժեշտ պայմանները (գործելու համար իրավաբանական իրավասություն, համաձայնություն և շահագրգռված կողմերի ներգրավվածություն):

Երկու կողմերն էլ համաձայնում են հսկել, որպեսզի աշխատանքի բազմամյա ծրագրի իրականացման գործընթացը կապահովվի փուլ առ փուլ և հիմնավորված ձևով:

Երկու կողմերը համաձայն են, որ սույն Համաձայնագրին առնչվող յուրաքանչյուր օգնություն, օժանդակություն, ուսումնասիրություն կամ գործողություն պետք է ապահովվի իրենց համաձայնությամբ՝ երաշխավորելու համար համապատասխանությունն ու լավ իրականացումը:

Շրջանի ֆինանսական աջակցությունը տրամադրվում է մշտական Խառը հանձնաժողովում ընդգրկված ընտրված անդամների որոշման հիման վրա: Բացի այդ, Մշտական հանձնաժողովը հաստատում է համաձայնագիր՝ մատնանշելով, հատկապես, օժանդակության արժանացած գործողությունների նպատակը, նախատեսվող գումարի չափը և հստակեցնելով շրջանային ֆինանսական աջակցության տրամադրման եղանակները:

<u>Հոդված IV- Գնահատում</u>

Համագործակցության մշտական Խառը հանձնաժողովի կողմից նախատեսված գործողությունների ծրագիրը պետք է գնահատվի այս մարմնի կողմից:

Բացի այդ, կիրականացվի նաև եռամյա գնահատում երկու կողմերի միասնական համաձայնությամբ ընտրված արտաքին մարմնի կողմից:

<u>Հոդված V- Հարաբերությունները երրորդ կողմերի հետ</u>

Ստորագրող կողմերը կներգրավեն իրենց ենթակառուցվածքային, տնտեսական, սոցիալական, մասնագիտական և շահագրգիռ ասոցացիաների համագործակցային ջանքերը: Նրանք կփորձեն իրենց նախագծերն առաջ մղել նաև եվրոպական և միջազգային կառույցներում:

Նրանք համաձայնության են եկել զուգահեռաբար աշխատել նաև տարածքային կառավարման մարմինների ազգային, եվրոպական և միջազգային ցանցերի շրջանակներում, որոնց պատկանում են:

Նրանք կգործեն խորհրդակցելով իրենց ազգային իշխանությունների հետ՝ Ֆրանսիայի ու Հայաստանի միջազգային պարտավորությունները հարգելով:
Նրանք կարող են դիմել արտաքին ծառայություններ իրականացնողներին:

Հոդված VI- Գործուղումներ

Ինստիտուցիոնալ և տեխնիկական առաքելությունների ժամանակ միջազգային տրանսպորտի ծախսերը կհոգա այն կողմը, որն ուղարկում է իր ներկայացուցիչներին կամ փորձագետներին: Իսկ տվյալ երկրում մնալու ծախսերը (բնակավայր, տեղական տրանսպորտ) կհոգա հրավիրող կողմը:

Հոդված VII- Տևողություն

Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում այն պահից, երբ Կողմերը ստանում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին գործընթացների կատարման մասին վերջին պաշտոնական գրավոր տեղեկացումը:
Պայմանագիրը կնքվում է տասը տարի ժամկետով և կունենա երկարացնելու հնարավորություն:

Ստորագրված է Փարիզում 2011թ-ի ապրիլի 26-ին երկու օրինակով՝ ֆրանսերեն և հայերեն լեզուներով:

Իլ դը Ֆրանս Շրջանային խորհրդի կողմից **Երևան քաղաքի կողմից**

Ժան-Պոլ Հյուշոն **Կարեն Կարապետյան**